

## ԿԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

### ՍՈՒՐԲ ՀԵՐԱԿԼԻԴԻՈՍ ԿԻՊՐԱՑՈՒ ՎԱՐՔԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1985 թվականին բեկհացի Աշանավոր հայագետ Միշել վաճ Էսքրոլը հրատարակեց Սուրբ Հերակլիդիոս Կիպրացու վարքի հայերեն բնագիրը՝ ներածական ուսումնամությամբ սիրովյամբ, Փրանսերեն թարգմանությամբ ու ծանոթագրություններով համեմերձ:<sup>1</sup> Ներածական ուսումնամության մեջ հեղինակը հանգամանորեն քննության է ենթարկում վարքի հայերեն և հունարեն բնագիրի առնչակցության, սրբախոսական պահպատճառ ստեղծման միջավայրի ու ժամանակի խնդիրները, ինչպես նաև մի շարք հարակից պատմա-բանահրական հարցեր: Քննության արդյունքները աշխատափրողին թույլ են տալիս առաջ քաշել հետևյալ հիմնական դրույթները:

Վարքի հայերեն թարգմանությունը Կիպրոսում հաստատված քաղկեդոնական հայերի գրական արտադրանքներից մեկն է: Հայտնի է, որ հայերը հոծ զանգվածով Կիպրոսում հիշվում են դեռևս VI դարից. Թեոփիլակոսու Սիմոնատայի վկայությամբ Տիրերիոս կայսը (578—582 թթ.) կողի էր տեղափոխվել տաս հազարից ավելի հայ բնակչություն: Պատահական չե, որ ոմն անառուն հայ քաղկեդոնականի «Հայոց անցուղարձերի պատմության» (Narratio de rebus Armeniæ) հունարեն ձեռագրերից մեկը 1299 թվականին ընդօրինակվել է Կիպրոսի մի հայկական վանքում: Նույնպես պատահական չե, որ Հերակլիդիոսի վարքի հայերեն բնագրի միակ ընդօրինա-

կությունը պահպանվել է Ղրիմի հայ քաղկեդոնական համայնքում ստեղծված մի ձեռագրում, որն այժմ կրում է Փարիզի Ազգային գրադարանի 116—118 համարը (էջ 115):

Վարքի հայերեն բնագրի հունական մեզ չհասած նախօրինակը, ամենայն հավանականությամբ, ստեղծվել է V դարի սկզբում (էջ 126): Այն կառուցված է առաքելական պարականուն գրվածքների կաղապարով (էջ 122—123), մանավանդ եթե նկատի ունենանք, որ հիմնական գործող անձանց թվում հանդես են գալիս Պողոս և Բառնաբա առաջապեսները: Հայերեն թարգմանությունը, դատելով նրա լեզվից, կատարվել է VIII—IX դարերում, քանի որ նրանուն առկա են դասական գրաբարին խորթ լեզվական տարրեր (էջ 126):

Հերակլիդիոսի վարքի պահպանված հունական բնագիրն<sup>2</sup> իրենից ներկայացնում է հայերեն թարգմանության կորած նախօրինակի հետագա հմբագրությունը, որն իրագործվել է, հավանաբար, V—VI դարերի սահմանագիրին (էջ 118, 126): Հունական և հայկական պահպատճառ համեմատական տախտակը լիիկ պատկերացում է տալիս ինչպես բնագրերի աղերսների, այնպես նաև նրանց տարբերությունների մասին (էջ 116—118): Ուշագրավ է մանավանդ այն հանգամանքը, որ հայերեն թարգմանության եզրափակիչ դրվագին հունարեն բնագրում հաջորդում

<sup>1</sup> M. van Esbroeck, Les Actes arméniens de Saint Héraclide de Chypre, „Analecta Bollandiana“, t. I., 1985, p. 115—162.

<sup>2</sup> F. Halkin, Les Actes apocryphes de Saint Héraclide de Chypre, „Analecta Bollandiana“, t. 8 1964, p. 183—169.

է ևս տասներկու դրվագ, զգալիորեն մեծացնելով վարքի ծավալը: Մ. վաճ Էսրրոկը բազմաթիվ օրինակներով հաստատում է, որ հունարեն խմբագրության հավելյալ դրվագները հետամուտ են և, որ հայերեն բնագիրը ներկայացնում է ավանդության նախնական վիճակը: Բերենք ամենաբնորոշ օրինակներից մեկը.

Հայ վարքի՝ Սուրբ Հերակլիի հոգածորդությամբ հարություն է տալիս օձից խայթված մի պատանու, որը հունարեն բնագրում ուժ անգամ հորջործվում է՝ լեւու անունով, մինչեղու հայերենում այդ անունը բացակայում է: Սակայն, ինչպես արդարացնորեն ենթադրում է հեղինակը, այդ անունը ամենայն հավանականությամբ պահպանվել է հայերեն թարգմանության մի հատվածում, որտեղ ունենք «զանման պատանեակա» ընթերցվածը (Էջ 148, տող 3): Հայ թարգմանիչն, ըստ երևությին, ‘Աէտու թարգմանիչն, ըստ երևությին, անունը կարդացել է չ-չիւու կամ չնչիւու... և այն համարելով հասարակ անուն, թարգմանիչն է «անմեղ»: Եթե նրա օգտագործած հունարեն նախօրինակում այդ անունն իսկապես հիշվեր մի քանի անգամ, ապա այդպիսի թյուրիմացություն չեր կարող տեղի ունենալ: Ուստի պարզ է, որ նշված անձնավորությանը նշանակալից դեր է հատկացվել հետագայում, հունական բնագիր խմբագրման ժամանակ:

Ինչպես նշվեց, Հերակլիի պարքի հայերեն թարգմանությունը մեզ է հասել մեկ ձեռագիր ընդօրինակությամբ, որի հիման վրա էլ իրագործված է գրախտավոր հրատարակությունը: Դա Փարիզի Ազգային գրադարանի № 116—118 եռամանյա Տոնական-Ծաղքանիշը է<sup>3</sup>, ընդօրինակված Ղրիմում մի քանի գրիշների ձեռքով և Ավետիք վարդապետ Խոստանարակի պատվերով: Ֆ. Մակլերը ձեռագիրը թվագրում է XIV դարով<sup>4</sup>, Մ. վաճ Էսրրոկը նշում է գրության երկու թվական՝ 1307 թ. (Էջ 115) և 1324 թ. (Էջ 126), որոնցից մեկը վրիշակ պետք է համարել: Այս հսկայածավալ ձեռագիրը (978 թերթ, եռապուն գրությամբ) հայ ճառագրական և սրբախտական գրականության ամենահարուստ գանձարաններից է և ըստ արժմ արժանի է բանասերների հատուկ ուշադրությամբ:

Դժբախտաբար, վարքի հայերեն բնագիրը մեզ է հասել բայլակամին աղճատված վիճակում: հաճախակի են առանձին բա-

<sup>3</sup> Զիոնագիրի Ակարագրությունը տե՛ս՝ F. Macler, Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale, Paris, 1908, p. 57—61.

<sup>4</sup> Անդ, Էջ 61:

ների և նույնիսկ մտքերի աղավաղումները, ուղղագրական և կետադրական անկանությունները և այլն: Մ. վաճ Էսրրոկը նպատակահարմար է գտել բնագիրը հրատարակել անփոփոխ, լիովին արտացոլելով նրա ձեռագրական պատկերը: Ինչ խոսք, ժամանակակից բնագրագիտության տեսակետից սա ճիշտ մոտեցում է, թեև կարելի էր նաև բնագրում անհրաժեշտ ուղղումներ կատարել, ձեռագրական սխալ ընթերցումները նշելով տողատակում: Մասնավանդ որ այդ ընթերցումների մեջ կան մի շարք բացահայտ աղճատումներ, որոնք հիմնովին փոխում են նախադասությունների միտքը: Այսպես, օրինակ.

**128, 9—11<sup>5</sup>.** «Սոքա էիմ յինքեանք և յայսդմանեն Աստուծոյ... յաստուածաշտութիւն դարձեալք»: Ընդգծված բառը աշխատահրում ընթերցել է «յայստմանէն», այնինչ ակնհայտ է, որ այստեղ պետք է վերականգնել «յազդմանէն» բառը:

**130, 6—8.** «Եւ որ կամի, Աստուած զարութիւն իր եւ զաքանչելիս և զնշանս տալ կամարարաց իրոց»: Ընդգծված բառը պետք է ուղղել «տաք»:

**130, 9—10.** «Եւ եկեալ մոռաի յԱսկիապուտամարն»: Ընդգծված անհիմաստ բառի տակ թաքնված է «մուտ ի» կապակցությունը:

**132, 1.** «Եւ քարոզութեան եւ խորհոցն նալորոր»: Թեև Մ. վաճ Էսրրոկը ընդգծված բառը ճիշտ է թարգմանել, բայց բնագրում թողել է նույնությամբ, այնինչ պետք էր ուղղել «խորհոցն»:

**138, 26—27.** «Դու տեսանես զփառ Քըրիտոսի չէ զեղ չաստուածքն, որ ոչ իրեանց կարեն աւգեն եւ ոչ այլոյ ումեր»: Ընդգծված բառը պետք է ուղղել «զերդ», նախադասությունը հասկանալով հետևյալ կերպ: «Դու տեսանում ես, որ Քրիստոսի փառը նման չէ չաստվածներին...»:

**142, 15—16.** «զմարմինս մեր սգենլով (=զգենլով) ընկալար վասն փրկութեան զգի մարդկան»: Աշխատահրույի կարծիքով ընդգծված բառը կապված է հայերեն «զոյգ/զոյգ» արմատի հետ, այնինչ այստեղ մենք ունենք «ազգի» բառի աղավաղումը:

**142, 21—22.** «Տէր որ պատրաստ է առ ի լուել որք յուսան ի հա եւ տա նշանս անհատիցն, ենեղ զանձրեն»: Ընդգծված բառն անհրաժեշտ է ուղղել «տապ», որպես «լույ» բայի համարա անդամ:

**144, 24.** «մահուցեալ կաց առաջի աշաց

<sup>5</sup> Նշում ենք հրատարակության էջը և տողը:

<sup>6</sup> Հմտ. M νεπ Εστροչκ, Les Actes, p. 127.

**իրոց»:** Ընդգծված բառերից առաջինը թթականարար պետք է ուղղել «մահացեալ», իսկ երկրորդը՝ նախադասության մտքի թելադրանքով՝ «կայ»:

**146, 25.** «ատեղծեա զսա փութապէս և կենդանացոյ քոյին շնորհիդ»: Այստեղ անտարակոյս միշտ և նախնական պետք է համարել ընդգծված բառի գործիքական հոլվածով՝ «շնորհիդ»:

**148, 20—22.** «առ ժամայն պատաճին իբրեւ ի քնոյ յարեալ և կանգնեցաւ, և նա էր ընդ ամրոխն որ շուրջն կահն»: Զեռագրի գրչի կամ աշխատասիրողի կողմից այստեղ սխալ բառանձատում է կատարված ընդգծված երկու բառերը պետք է միացնել իրար և կարդալ «մալլէր»: Յ-ի բացակայությունը նման դեպքերում այս ձեռագրի համար օրինաչափ է: Բայտ. թեկուզ բերված քաղվածքի վերջին «կալլին» բառը:

**150, 9—11.** «Այլ հրամայեաց սուրբն Մանասն աշակերտն վարդապետին Քրիստոսի և խաղաղ արարին և հեղին և մարդասիրին ընդ ամրոխն»: Ընդգծված բառերը պետք է ուղղել «խաղաղարարին» և «մեզին». «խաղաղարար», «մեզ» և «մարդասէր» բառերը պատկանում են Քրիստոսի բազմաթիվ մականունների շարքին:

**152, 2.** «Եւ ահա ոմն անահար լրբութեամբ եմուս ի տաճարն»: Հայերենում «անահար» բառ գոյություն չունի: Վարքի բովանդակության հետագա ընթացքից, սակայն, դժվար չէ կուսին, որ այդ անհմաստ ընթերցման տակ թաքնված է «այսահար» բառը (հմտ. 152, 4):

**154, 28—25.** «ծառայեցէք Քրիստոսի և կամաց նորա կարող լիք, զի մեղաց ձերոց զթողութիւն պարգևենցէ և ազատեսցէ զնեզ ի սղսղանաց ձերոց»: Ընդգծված բառերից առաջինը, անտարակոյս, պետք է համարել «կատարող» բառի աղավաղված ընթերցումը: Ինչ վերաբերում է երկրորդ բառին, ապա այն Մ. վան Էսքրոլը կապում է հայերեն «սուր» արմատի հետ: Մեզ թըպում է, սակայն, որ այստեղ անհրաժեշտ է վերականգնել «սղալանաց (=սխալանաց)» բառը: Ղ-ի գործածությունը և-ի փոխարեն չպետք է թյուրիմացության տեղիք տա, քանի որ դա սովորական է այս ձեռագրի համար (հմտ. 152, 25. ծղոր փիս ժխոր)

**156, 10.** «աղաթեմ և ակն ունիմ. խըստմանց նորա ըստ պատուիրանին»: Աշխատասիրողն ընդգծված բառը կապել է հա-

յերեն «խիստ» արմատի հետ և հետևողականորեն այն թարգմանել է բայց «խրստություն»: Սակայն, ինչպես պարզորոց կերպով երևում է նախադասության մտքից, այդ ընթերցման տակ պետք է տեսնել «խոստմանց» բառի հապավումը:

**156, 19—20.** «Իսկ մոլորեցուցիչն զաղեղն իր լարեաց և զննուս ի հեռանել իր ձգեաց»: Ընդգծված բառը Մ. վան Էսքրոլը թարգմանել է de loin «հեռվից», այնինչ ակնհայտ է, որ այն պետք է վերականգնել «ի ձեռանել», մասնավանդ որ նրան հաջորդում է «հիլը» դերանունը:

**156, 22—23.** «ամենայն զարութեամբ նույն հաստատեցէք ի Տէրն մեր Յիսոս Քրիստոս»: Ինչպես միշտ կուսին է աշխատասիրողը, ընդգծված բառն ուղղելի է «հոգուր»:

**156, 25—26.** «Դուք տեսանեք զշարս զայս մերձեալ յերիտասարդէս»: Ինչպես նշում է Մ. վան Էսքրոլը, հունարեն բնագրում, ընդհակառակն, խոսքը գնում է չարի հալածման (ծաջօրւուն) և ոչ թե մերձեցման մասին: Հայերեն և հունարեն բնագրերի միջև հակառակությունը վերանում է սակայն, եթե «մերձեալ» բառն ուղղում ենք «մերժեալ»:

**156, 27.** «Ոչ արդ և ամենայն չարութիւն քո ի քեզ դարձի»: Անտարակոյս հայերեն բնագիրն այստեղ աղավաղված է, քանզի Սուրբ Հերակլիոնը, աստանային դիմերով, չըր կարող անել, որ նրա չարությունը իրեն չվերադառնա: Թվում է, աղավաղումը կարդի է վերացնել ընդգծված կապակցությունը կարդալով «Ոչ արդարնեւ...», այսինքն հունտորական հարցի ձեւով:

Բացի, նշված դեպքերից, հայերեն բնագրում կան նաև մի շարք այլ մութ տեղեր, որոնց ճշգրիտ վերծանումն անհնար է առանց լրացուցիչ ձեռագրական տվյալների, որոնք, պետք է հուսալ, կարող են ի հայտ գալ հետագա բանահրական պրատումների ընթացքում:

Սյո բոլորով հանդերձ՝ Մ. վան Էսքրոլի իրագործած հրատարակությունը կարևոր ներդրում պետք է համարել ավանդության ուսումնասիրման գործում, մասնավանդ եթե նկատի ունենանք, որ հայերեն թարգմանության հրապարակման շնորհիվ հետազոտողների տրամադրության տակ է դրված մի հնամենի սրբախտական հուշարձան, որի հունարեն նախօրինակը չի պահպանվել: